

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ,  
ԱՍԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

Սույն կանոնակարգը սահմանում և կարգավորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի, ընտրության միջոցով համալրման գործընթացը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կանոնադրության 83, 84, 85 հոդվածների պահանջներին համապատասխան, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. փետրվարի 24-ի որոշման պատճառաբանական մասի 6-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Համալսարանի ամբիոնները կարող են լինել նաև համահամալսարանական, որոնց գործունեության անմիջական համակարգումը կատարվում է համապատասխան պրոռեկտորի կողմից: Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, դասախոսներ, ասիստենտներ, ստաժորներ, խորհրդական:

1. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում, բաց մրցույթի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում համալսարանի ռեկտորը: Ամբիոնի վարիչի ընտրությունը կազմակերպվում է իրականացվում է համալսարանի գիտական խորհրդում, սույն կանոնակարգին համապատասխան: Ամբիոնի վարիչի

թեկնածուի տարիքային սահմանափակումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

## II ԱՄԲԻՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

2. Ամբիոնը (ները) (բաժինները, լաբորատորիաները) ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են համալսարանի և սույն կանոնադրության հիման վրա: Ամբիոնը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:

Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են համալսարանի կանոնադրությամբ, ֆակուլտետի և ամբիոնի կանոնակարգերով:

3. Ամբիոնի վարիչը՝

- հաշվետու է ամբիոնին, ֆակուլտետի ղեկանին, համալսարանի ռեկտորին (պրոռեկտորին)
- ներկայացնում է ամբիոնը ֆակուլտետում և ֆակուլտետից դուրս, մասնակցում է համալսարանում ամբիոնի գործունեությանն առնչվող հարցերի քննարկմանը,
- նախագահում է ամբիոնի նիստերում,
- ֆակուլտետի և խորհրդի անդամ է ի պաշտոնե,
- իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական բեռնվածքի և ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկում դրանց կատարման ժամկետներն ու որակը,
- պլանավորում և ղեկավարում է ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքները և առարկայական ծրագրերի կազմումը, մասնակցում է մասնագիտությունների (մասնագիտացումների) ուսումնական պլանների կազմմանը,
- կատարում է ամբիոնի դասախոսների դասալսումներ և կազմակերպում դրանց քննարկում,
- ներկայացնում է ամբիոնի նիստին առաջարկություններ ամբիոնի պրոֆեսորադասախոսական թափուր պաշտոնատեղերի տեղակալման, պաշտոններում

առաջաշահման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և վերակոնտրակտավորման վերաբերյալ,

- ներկայացնում է առաջարկություններ համալսարանի ռեկտորին (պրոռեկտորին), ֆակուլտետի դեկանին ամբիոնի նոր պրոֆեսորադասախոսական պաշտոնատեղերի ստեղծման վերաբերյալ,
- կազմում և ֆակուլտետի դեկանին, համալսարանի ռեկտորին (պրոռեկտորին) է ներկայացնում պրոֆեսորադասախոսական կազմի պայմանագրերի նախագծեր,
- համալսարանի ռեկտորին (պրոռեկտորին), ֆակուլտետի դեկանին հաստատման է ներկայացնում ամբիոնի ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքների տարեկան պլանները, որի վերաբերյալ ներկայացնում տարեկան հաշվետվություն,
- կազմակերպում է գիտամանկավարժական կադրերի պատրաստման, ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի որակական բարձրացման և վերաորակավորման գործընթացներ մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի, որակի բարձրացման դասընթացներ և գիտական գործուղումների միջոցով,
- իրականացնում է կրթության բարեփոխումներ, վերահսկողություն և պատասխանատվություն է կրում ամբիոնում ուսումնական, մեթոդական, հետազոտական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ու որակի ամբիոնին ամրագրված գույքի, տեխնիկական միջոցների, սարքավորումների ֆինանսական կարգապահության, ներքին կարգ ու կանոնի և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանման համար,
  - իրավասու է նախաձեռնել ամբիոնի աշխատակիցների պարգևատրման և խրախուսման գործընթաց, միջնորդում է վերադաս մարմինների առջև ամբիոնի աշխատակիցներին կարգապահական տույժերի ներկայացման առիթով:

### III. ԱՄՔԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Համալսարանում սահմանվում է ամբիոնի վարիչի պաշտոնատեղի զբաղեցման բաց մրցույթային ընտրության կարգ:
5. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը ձեակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով,

հրապարակվում է համալսարանում և հանրապետական մամուլում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:

6. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին, որպես կանոն, կարող են մասնակցել գիտությունների դոկտորի գիտական աստիճան պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, որոնց տարիքը մրցույթին մասնակցելու դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետի վերջին օրվա դրությամբ չի գերազանցում 65-ը: Առաջին մրցույթից հետո ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում և կրկնակի մրցույթ հայտատարելուց հետո մրցույթին կարող են մասնակցել նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող այն անձը, որը ունի նաև դոցենտի գիտական կոչում: Ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող անձը պետք է ունենա առնվազն 5 տարվա մանկավարժական ստաժ:
7. Ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդների համար գիտական աստիճանի (կոչման) առկայությունը պարտադիր չէ:
8. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի գիտական քարտուղարին են ներկայացնում՝
  - դիմում համալսարանի ռեկտորի անունով,
  - կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
  - քաղվածք աշխատանքային գրքույկից,
  - տեղեկանք մանկավարժական ստաժի վերաբերյալ,
  - համառոտ ինքնակենսագրություն,
  - գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
  - տպագրած գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
  - տվյալներ պարգևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Համալսարանում 3 և ավելի տարիներ աշխատած պաշտոնատեղի հավակնորդի համար ներկայացվում են նաև ուսանողների կողմից նրա մանկավարժական

գործունեության գնահատման սոցիոլոգիական հարցման արդյունքները, որոնք ստացվում են սահմանված կարգով:

9. Պաշտոնատեղի հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե նրա որակավորումը չի բավարարում մրցույթի պայմաններին կամ էլ չի պահպանված դիմումի ներկայացման ժամկետը, կամ լրացել է հավակնորդի 65 տարին:
10. Համալսարանի գիտական քարտուղարը հավակնորդների գործերը հանձնում է ֆակուլտետի դեկանին, որը մինչև 2 շաբաթվա ընթացքում կազմակերպում է հավակնորդների գործերի քննարկումը ամբիոնում (ամբիոնում կազմակերպվող ընտրություններին, բաց քվեարկությանը, մասնակցում են հիմնական հաստիքային և համատեղությամբ աշխատող համալսարանի դասախոսներ), ֆակուլտետի գիտխորհրդում և համալսարանի նշանակումների հանձնախումբ է ներկայացնում համապատասխան կարծիքները՝ Կարծիքներում նշվում են՝ հավակնորդի մասնագիտական բնութագիրն ու մանկավարժական գործունեության գնահատականը. բաց քվեարկության արդյունքները և առաջարկությունների պատճառաբանված հիմնավորումը:
11. Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում կարող է հիմնավորված առաջնություն տրվել հավակնորդներից մեկին, որից հետո բոլոր գործերը ներկայացվում են համալսարանի նշանակումների հանձնախմբին:
12. Համալսարանի նշանակումների հանձնախումբը մինչև 2 շաբաթվա ընթացքում քննարկում և ներկայացնում է համալսարանի գիտական խորհուրդ:  
Թեկնածուն կարող է հայտարարել ինքնաբացարկ մինչև գիտական խորհրդի որոշմամբ նրան փակ (գաղտնի) քվեարկության թողնելու պահը:  
Մրցույթի անցկացման կարգը և ընթացակարգը սահմանվում են համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգով:
13. Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուին փակ (գաղտնի) քվեարկության թողնելու կամ նրա բացարկի մասին որոշումն ընդունվում է յուրաքանչյուր թեկնածուի հարցի քննարկումից հետո, գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

14. Նախագահողը ամփոփում է քննարկումների արդյունքները և գիտական խորհրդի անդամներին ներկայացնում փակ (գաղտնի) քվեարկության կարգը:

15. Նախագահողի առաջարկով փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ իր կողմից ընտրում է 3 հոգուց ոչ պակաս հաշվիչ հանձնաժողով, որի կազմում բացառվում է այն անձանց ընդգրկումը, որոնց թեկնածությունները առաջադրված են:

Հաշվիչ հանձնաժողովն իր կողմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, իսկ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

16. Բացարձակ չստացած թեկնածությունները մտցվում են քննաթերթիկի մեջ: Միակ թեկնածության քվեարկության դեպքում քննաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը:

Մեկից ավելի թեկնածությունների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը:

17. Հաշվիչ հանձնաժողովը գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ, որը ստանալիս նա ստորագրում է գիտական խորհրդի անդամացուցակում:

18. Միակ թեկնածուի քվեարկության դեպքում քվեաթերթիկում թողնվում է «կողմ» կամ «դեմ» բառը:

Մեկից ավելի թեկնածուների դեպքում քվեաթերթիկում թողնվում է միայն մեկ թեկնածուի անուն ազգանունը, որի օգտին գիտական խորհրդի անդամը քվեարկում է՝ ջնջելով մյուս թեկնածուների անունները, որոնց դեմ է քվեարկում: Բոլոր թեկնածուներին դեմ քվեարկելու դեպքում, գիտխորհրդի անդամը քվեաթերթիկում ջնջում է բոլոր թեկնածուների անունները. ազգանունները:

19. Քվեարկությունն ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

Անվավեր են համարվում այն քվեաթերթերը, որոնցում՝

ա) թողնված կամ ջնջված են թե «կողմ» և թե «դեմ» բառերը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

բ) թողնված են երկու և ավելի թեկնածուների (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում),

գ) քվեաթերթիկում հստակ չեն ջնջված «կողմ» և «դեմ» բառերը և անուն ազգանունները, կատարված են սույն կարգի կետ 18-ով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

20. Միակ հավակնորդի դեպքում թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

21. Մեկից ավելի թեկնածուների դեպքում՝

ա) ընտրված է համարվում գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն հավաքած թեկնածուն.

բ) թեկնածուների կողմից գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն չհավաքելու դեպքում գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են.

- առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները, կամ -  
առավելագույն ձայն ստացած 1-ին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած 2-րդ ու հաջորդ թեկնածուները, կամ

- առավելագույն և նույնաթիվ ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:

22. Ամբիոնի վարիչի ընտրության արդյունքները հաստատվում են համալսարանի գիտական խորհրդի նիստում, որի արձանագրությունը ներկայացվում է համալսարանի ռեկտորին:

23. Ամբիոնի վարիչի ընտրության վերաբերյալ ընդունված որոշման հետ համալսարանի ռեկտորի անհամաձայնության դեպքում, ռեկտորը գրավոր պատճառաբանված հիմնավորում է իր որոշումը և համալսարանի գիտական քարտուղարին է վերդարձում՝ ամբիոնի վարիչի թեկնածուի գործը

համալսարանի գիտական խորհրդում 5-օրյա ժամկետում կրկնակի քննարկելու և քվեարկելու համար:

24. Ամբիոնի վարիչի պաշտոնի որակական պահանջները բավարարող հավակնորդների բացակայության կամ սույն կանոնակարգի նախատեսված ընթացակարգի իրականացման արդյունքով ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, որին կարող են մասնակցել նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք:
25. Ամբիոնների միացումից կազմավորված նոր ամբիոնի վարիչի կամ լուծարված ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը (նոր մրցույթ հայտարարելու կամ ամբիոնի վարիչի պաշտոնի պահանջներին բավարարող ամբիոնի դասախոսներից մեկին նշանակելու) որոշում է համալսարանի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ:

Ամբիոնների բաժանման դեպքում ամբիոնի վարիչ, համալսարանի ռեկտորը հրամանով նշանակում է կազմավորված նոր ամբիոններից մեկի վարիչի պաշտոնում, իսկ մյուս ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար հայտարարվում է մրցույթ համաձայն սույն կանոնակարգի III բաժնի դրույթների:

Պաշտոնավարումը շարունակելու դեպքում նախկին ամբիոնի վարիչը պահպանում է իր կարգավիճակը մինչև նախկին մրցույթով (պայմանագրով) սահմանված ժամկետի ավարտը:

26. Առանձնահատուկ դեպքում (նոր ստեղծվող ֆակուլտետ կամ համահամալսարանական ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, կրկնակի մրցույթի բացասական արդյունքի և այլն) համալսարանի ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել սույն կանոնակարգի պահանջները բավարարող տվյալ կամ այլ բուհի մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրության նոր գործընթաց:



#### IV. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԷՎ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

Ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ համալսարանի ռեկտորը կնքում է պայմանագիր օրենքով սահմանված կարգով մինչև 5 տարի ժամկետով:

Պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ համալսարանի ռեկտորը օրենքով սահմանված կարգով, պայմանագրում նշված ժամկետի ավարտից 2 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչին և նշանակում ամբիոնի վարիչի նոր ընտրություններ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով:

Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամկետ լուծվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ կամ կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ այլ պատճառներով:

Պայմանագիրը դադարեցնելու կամ լուծելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկ են պահում 2 ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո համալսարանի ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգով: